ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ, ՏՊԻՉ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՊՐՈՅԵԿՏՈՐՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/92»

ք. Երևան

«13» մայիսի 2020 թ.

ԵՊՀ Հիմնադրամը ի դեմս պրոռեկտոր Ա. Գ. Մալխասյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Լանար Սերվիս ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Դանիելյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 41 419 840 (քառասունմեկ միլիոն չորս հարյուր տասնինը հազար ութ հարյուն քառասուն) ՀՀ դրամ, ներառյան ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[1]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[2] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Գնորդի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է ԵՊՀ պրոռեկտորը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ԵՊՀ» հիմնադրամ	«Լանար Սերվիս ՍՊԸ» ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	ք Երևան, Բաբաջանյան 163/13
'Արդշինբանկ' ՓԲԸ	ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928	Հ/Հ 01843373
Հ/Հ 247010000906	ՀՎՀՀ 2500010195390100
պրոռեկտոր՝ Ա. Մալխասյան	Տնօրեն՝ Տ. Դանիելյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«13» մայիսի 2020 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/92» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	30211280/1	**Համակարգիչ 1**	**HP ProDesk 400 G6 MT, Hewlett Packard**	***HP ProDesk 400 G6 MT*** *պրոցեսոր՝ Intel Core i3-9100 with Intel® UHD Graphics 610/630, 4GB DDR4 2666 DIMM* *Կոշտ սկավառակ HDD ՝ 500GB/3.5"/ 7200rpm/ SATA III/,* *Կոշտ սկավառակ 128GB M.2 SSD,* *Չիպսեթը՝ Chipset - Intel B360,* *ընդլայնման սլոտները՝ Expansion slots – 1 PCIe 3 x16; 2 PCIe 3 x1;, միացման պորտերը՝ Ports and Connectors – 1x headset connector; 4xUSB 3.1 Gen 1; 4xUSB 2.0; 1x audio-in; 1x audio-out; 1xHDMI; 1x VGA; 1xDP; 1x RJ-45* *Case/ Տեսակը - Micro tower form factor* *Սնուցման բլոկ՝ Active PFC, նախատեսված փոփոխական միաֆազ 220Վ լարմամբ աշխատանքի համար:* *Սրեղնաշարը գործարանային անգլերեն/ռուսերեն տառատեսակներով, մկնիկը լազերային:* *Համակարգիչը, սրեղնաշարը, մկնիկը միևնույն արտադրողից:* *Ներառված - ՀՀ տարածքում գործող սրանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ:* *Երաշխիքային սպասարկում 1 տարի* *Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF);* *Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :*	հատ	250000	3750000	15	Ալ. Մանուկյան 1	15	մայիս-հուլիս 2020
2	30211280/2	**Համակարգիչ 2**	**HP ProDesk 400 G6 MT, Hewlett Packard**	***HP ProDesk 400 G6 MT*** *պրոցեսոր՝ Intel Core i3-9100 with Intel® UHD Graphics 610/630, 8GB (1x8GB) DDR4 2666 DIMM Կոշտ սկավառակ HDD ՝ 500GB/3.5"/ 7200rpm/ SATA III/,* *Կոշտ սկավառակ 256GB M.2 SSD,* *Չիպսեթը՝ Chipset - Intel B360,* *ընդլայնման սլոտները՝ Expansion slots – 1 PCIe 3 x16; 2 PCIe 3 x1;, միացման պորտերը՝ Ports and Connectors – 1x headset connector; 4xUSB 3.1 Gen 1; 4xUSB 2.0; 1x audio-in; 1x audio-out; 1xHDMI; 1x VGA; 1xDP; 1x RJ-45* *Case/ Տեսակը - Micro tower form factor* *Սնուցման բլոկ՝ Active PFC, նախատեսված փոփոխական միաֆազ 220Վ լարմամբ աշխատանքի համար:* *Սրեղնաշարը գործարանային անգլերեն/ռուսերեն*	հատ	274050	5481000	20	Ալ. Մանուկյան 1	20	մայիս-հուլիս 2020

				գառապտեսակներով, մկնիկը լազերային: *Համակարգիչը, սրեղնաշարը, մկնիկը միևնույն արտադրողից:* *Ներառված - ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ:* *Երաշխիքային սպասարկում 1 տարի* *Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF);* *Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :*							
3	30211280/3	**Համակարգիչ 3**	**HP ProDesk 400 G6 MT, Hewlett Packard**	***HP ProDesk 400 G6 MT*** *պրոցեսոր՝ Intel Core i5-9400 with Intel® UHD Graphics 610/630, 8GB DDR4 2666 DIMM* *Կոշտ սկավառակ HDD ՝ 500GB/3.5"/ 7200rpm/ SATA III/,* *Կոշտ սկավառակ 256GB M.2 SSD,* *Չիպսետը՝ Chipset - Intel B360,* *ընդլայնման սլոտները՝ Expansion slots – 1 PCIe 3 x16; 2 PCIe 3 x1;, միացման պորտերը՝ Ports and Connectors – 1x headset connector; 4xUSB 3.1 Gen 1; 4xUSB 2.0; 1x audio-in; 1x audio-out; 1xHDMI; 1x VGA; 1xDP ; 1x RJ-45* *Case/ Տեսակը - Micro tower form factor* *Սնուցման բլոկ՝ Active PFC, նախատեսված փոփոխական միաֆազ 220Վ լարմամբ աշխատանքի համար:* *Սրեղնաշարը գործարանային անգլերեն/ռուսերեն գառապտեսակներով, մկնիկը լազերային:* *Համակարգիչը, սրեղնաշարը, մկնիկը միևնույն արտադրողից:* *Ներառված - ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ:* *Երաշխիքային սպասարկում 1 տարի* *Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF);* *Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :*	հատ	330480	13219200	40	Ալ. Մանուկյան 1	40	մայիս-հուլիս 2020
4	30211280/4	**Համակարգիչ 4**	**HP ProDesk 400 G6 MT, Hewlett Packard**	***HP ProDesk 400 G6 MT*** *պրոցեսոր՝ Intel Core i5-9400 with Intel® UHD Graphics 610/630, 16GB (2x8GB) DDR4 2666 DIMM Կոշտ սկավառակ HDD ՝ 1TB 7200 SATA-6G 3.5/,* *Կոշտ սկավառակ 256GB M.2 SSD,* *Չիպսետը՝ Chipset - Intel B360,* *ընդլայնման սլոտները՝ Expansion slots – 1 PCIe 3 x16; 2 PCIe 3 x1;, միացման պորտերը՝ Ports and Connectors – 1x headset connector; 4xUSB 3.1 Gen 1; 4xUSB 2.0; 1x audio-in; 1x audio-out; 1xHDMI; 1x VGA; 1xDP; 1x RJ-45* *Case/ Տեսակը - Micro tower form factor* *Սնուցման բլոկ՝ Active PFC, նախատեսված փոփոխական միաֆազ 220Վ լարմամբ աշխատանքի համար:* *Սրեղնաշարը գործարանային անգլերեն/ռուսերեն գառապտեսակներով, մկնիկը լազերային:* *Համակարգիչը, սրեղնաշարը, մկնիկը միևնույն արտադրողից:* *Ներառված - ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ:* *Երաշխիքային սպասարկում 1 տարի* *Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF);* *Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :*	հատ	357480	7149600	20	Ալ. Մանուկյան 1	20	մայիս-հուլիս 2020
5	30211280/5	**Համակարգիչ 5**	**HP ProDesk 400 G6 MT, Hewlett Packard HP ProDesk 400**	***HP ProDesk 400 G6 MT*** *պրոցեսոր՝ Intel Core i7-9700 with Intel® UHD Graphics 610/630, 8GB DDR4 2666 DIMM* *Կոշտ սկավառակ HDD ՝ 500GB/3.5"/ 7200rpm/ SATA III/*	հատ	416880	2084400	5	Ալ. Մանուկյան 1	5	մայիս-հուլիս 2020

			G6 MT, Hewlett Packard	Կոշտ սկավառակ 256GB M.2 SSD, Չիպսեթը՝ Chipset - Intel B360, ընդլայնման սլոտները՝ Expansion slots – 1 PCIe 3 x16; 2 PCIe 3 x1;, միացման պորտերը՝ Ports and Connectors – 1x headset connector; 4xUSB 3.1 Gen 1; 4xUSB 2.0; 1x audio-in; 1x audio-out; 1xHDMI; 1x VGA; 1xDP ; 1x RJ-45 Case/ Տեսակը - Micro tower form factor Սնուցման բլոկ՝ Active PFC, նախատեսված փոփոխական միաֆազ 220Վ լարմամբ աշխատանքի համար: Սփեղնաշարը գործարանային անգլերեն/ռուսերեն փառատեսակներով, մկնիկը լազերային: Համակարգիչը, սփեղնաշարը, մկնիկը միևնույն արտադրողից: Ներառված - ՀՀ տարածքում գործող սփանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ: Երաշխիքային սպասարկում 1 տարի Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF); Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :							
6	30211280/6	Համակարգիչ 6	HP ProDesk 400 G6 MT, Hewlett Packard	**HP ProDesk 400 G6 MT** պրոցեսոր՝ Intel Core i7-9700 with Intel® UHD Graphics 610/630, 16GB (2x8GB) DDR4 2666 DIMM Կոշտ սկավառակ HDD ՝1TB 7200 SATA-6G 3.5 Կոշտ սկավառակ 512GB M.2 SSD Չիպսեթը՝ Chipset - Intel B360, ընդլայնման սլոտները՝ Expansion slots – 1 PCIe 3 x16; 2 PCIe 3 x1;, միացման պորտերը՝ Ports and Connectors – 1x headset connector; 4xUSB 3.1 Gen 1; 4xUSB 2.0; 1x audio-in; 1x audio-out; 1xHDMI; 1x VGA; 1xDP ;1x RJ-45 Case/ Տեսակը - Micro tower form factor Սնուցման բլոկ՝ Active PFC, նախատեսված փոփոխական միաֆազ 220Վ լարմամբ աշխատանքի համար: Սփեղնաշարը գործարանային անգլերեն/ռուսերեն փառատեսակներով, մկնիկը լազերային: Համակարգիչը, սփեղնաշարը, մկնիկը միևնույն արտադրողից: Ներառված - ՀՀ տարածքում գործող սփանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ: Երաշխիքային սպասարկում 1 տարի Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF); Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :	հատ	449430	2247150	5	Ալ. Մանուկյան 1	5	մայիս-հուլիս 2020
7	30211200/1	Դյուրակիր համակարգիչ 1	HP ProBook 450 G7, Hewlett Packard	**HP ProBook 450 G7** CPU/պրոցեսոր՝ Intel Core i3-10110U 4MB Cache, up to 4.1 GHz, RAM/օպերատիվ հիշողություն՝ 4GB/DDR4-2666MHz, HDD/ Կոշտ սկավառակ՝ 500GB 5400rpm 2.5" SATA Տեսաքարտ՝ Intel(R) UHD Graphics with shared graphics memory, Էկրանի անկյունագիծ՝ 15.6-inch FHD (1920 x 1080) Anti-Glare, Այլ առանձնահատկություններ՝ վեբ տեսախցիկ՝ HD 720p, ՝1x SD (SD, SDHC, SDXC); 1 USB 3.1 Type-C™ Gen 1 ; 2 USB 3.1 Gen 1; 1 USB 2.0; WiFi 802.11ac, 1 HDMI 1.4b; 1 RJ-45; 1 headphone/microphone combo; 1 AC power Մարտկոցի աշխատաժամանակը՝ Up to 13 hours and 30 minutes Երաշխիքային սպասարկում 1 տարի: Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF); Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :	հատ	277008	1385040	5	Ալ. Մանուկյան 1	5	մայիս-հուլիս 2020

8	30211200/2	Դյուրակիր համակարգիչ 2	HP ProBook 450 G7, Hewlett Packard	***HP ProBook 450 G7*** *CPU/պրոցեսոր՝ Intel Core i3-10110U 4MB Cache, up to 4.1 GHz,* *RAM/օպերատիվ հիշողություն՝ 8GB/DDR4-2666MHz,* *SSD/ Կոշտ սկավառակ՝ 256GB M.2 PCIe NVMe SSD,* *Տեսաքարտ՝ Intel(R) UHD Graphics with shared graphics memory,* *Էկրանի անկյունագիծ՝ 15.6-inch FHD (1920 x 1080) Anti-Glare,* *Այլ առանձնահատկություններ՝ վեբ տեսախցիկ՝ HD 720p, ՝ 1x SD (SD, SDHC, SDXC.), 1 USB 3.1 Type-C™ Gen 1 ; 2 USB 3.1 Gen 1; 1 USB 2.0; WiFi 802.11ac, 1 HDMI 1.4b; 1 RJ-45; 1 headphone/microphone combo; 1 AC power Մարտկոցի աշխատաժամանակը՝ Up to 13 hours and 30 minutes* *Երաշխիքային սպասարկում 1 տարի: Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF); Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :*	հատ	305100	1525500	5	Ալ. Մանուկյան 1	5	մայիս-հուլիս 2020
9	30211200/3	Դյուրակիր համակարգիչ 3	HP ProBook 440 G7, Hewlett Packard	***HP ProBook 440 G7*** *CPU/պրոցեսոր՝ Intel Core i5-10210U 6MB Cache, up to 4.2 GHz,* *RAM/օպերատիվ հիշողություն՝ 8GB/DDR4-2666MHz,* *SSD/ Կոշտ սկավառակ՝ 512GB M.2 PCIe NVMe SSD* *Տեսաքարտ՝ Intel(R) UHD Graphics with shared graphics memory,* *Էկրանի անկյունագիծ՝ 14-inch FHD IPS Anti-Glare,* *Այլ առանձնահատկություններ՝ վեբ տեսախցիկ՝ HD 720p, ՝ 1x SD (SD, SDHC, SDXC.), 1 USB 3.1 Type-C™ Gen 1; 2 USB 3.1 Gen 1; 1 USB 2.0 ; WiFi 802.11ac ; 1 HDMI 1.4b; 1 RJ-45; 1 headphone/microphone combo; 1 AC power,* *Մարտկոցի աշխատաժամանակը՝ Up to 13 hours and 30 minutes* *Երաշխիքային սպասարկում 1 տարի: Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF); Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :*	հատ	369150	1107450	3	Ալ. Մանուկյան 1	3	մայիս-հուլիս 2020
10	30211200/4	Դյուրակիր համակարգիչ 4	HP ProBook 450 G7, Hewlett Packard	***HP ProBook 450 G7*** *CPU/պրոցեսոր ntel Core i7-10510U 8MB Cache, up to 4.9 GHz,* *RAM/օպերատիվ հիշողություն՝ 8GB/DDR4-2666MHz,* *SSD/ Կոշտ սկավառակ՝ 256GB M.2 PCIe NVMe SSD,Տեսաքարտ՝ Intel(R) UHD Graphics with shared graphics memory,* *Էկրանի անկյունագիծ՝ 15.6-inch FHD (1920 x 1080) Anti-Glare,* *Այլ առանձնահատկություններ՝ վեբ տեսախցիկ՝ HD 720p, ՝ 1x SD (SD, SDHC, SDXC.), 1 USB 3.1 Type-C™ Gen 1 ; 2 USB 3.1 Gen 1; 1 USB 2.0;; WiFi 802.11ac, 1 HDMI 1.4b; 1 RJ-45; 1 headphone/microphone combo; 1 AC power* *Մարտկոցի աշխատաժամանակը՝ Up to 13 hours and 30 minutes* *Երաշխիքային սպասարկում 1 տարի: Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF); Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :*	հատ	418000	1254000	3	Ալ. Մանուկյան 1	3	մայիս-հուլիս 2020
11	30211200/	Դյուրակիր համակարգիչ 5	HP ProBook 450 G7, Hewlett Packard	***HP ProBook 450 G7*** *CPU/պրոցեսոր ntel Core i7-10510U 8MB Cache, up to 4.9 GHz,* *RAM/օպերատիվ հիշողություն՝ 16GB DDR4 2666,* *HDD/ Կոշտ սկավառակ՝ 1TB 5400 rpm 2.5" SATA HDD,* *SSD/ Կոշտ սկավառակ՝ 256GB M.2 PCIe NVMe SSD*	հատ	467500	1402500	3	Ալ. Մանուկյան 1	3	մայիս-հուլիս 2020

				,Տեսաքարտ՝ Intel(R) UHD Graphics with shared graphics memory, Էկրանի անկյունագիծ՝ 15.6-inch FHD (1920 x 1080) Anti-Glare, Այլ առանձնահատկություններ՝ վեբ տեսախցիկ՝ HD 720p, ՝ 1x SD (SD, SDHC, SDXC.), 1 USB 3.1 Type-C™ Gen 1 ; 2 USB 3.1 Gen 1; 1 USB 2.0; WiFi 802.11ac, 1 HDMI 1.4b; 1 RJ-45; 1 headphone/microphone combo; 1 AC power Մարտկոցի աշխատաժամանակը՝ Up to 13 hours and 30 minutes Երաշխիքային սպասարկում 1 տարի: Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF); Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :							
12	30211200/6	Դյուրակիր համակարգիչ 6*	HP ProBook 450 G7, Hewlett Packard	**HP ProBook 450 G7** CPU/պրոցեսոր ՝ Intel Core i5-10210U 6MB Cache, up to 4.2 GHz RAM/օպերատիվ հիշողություն՝ 16GB DDR4 2666, HDD/ Կոշտ սկավառակ՝ 1TB 5400 rpm 2.5" SATA HDD, SSD/ Կոշտ սկավառակ՝ 256GB M.2 PCIe NVMe SSD ,Տեսաքարտ՝ Intel(R) UHD Graphics with shared graphics memory, Էկրանի անկյունագիծ՝ 15.6-inch FHD (1920 x 1080) Anti-Glare, Այլ առանձնահատկություններ՝ վեբ տեսախցիկ՝ HD 720p, ՝ 1x SD (SD, SDHC, SDXC.), 1 USB 3.1 Type-C™ Gen 1 ; 2 USB 3.1 Gen 1; 1 USB 2.0; WiFi 802.11ac, 1 HDMI 1.4b; 1 RJ-45; 1 headphone/microphone combo; 1 AC power Մարտկոցի աշխատաժամանակը՝ Up to 13 hours and 30 minutes Երաշխիքային սպասարկում 1 տարի: Արտադրողի կողմից լիազորման ձևի առկայություն (MAF); Երկու պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի առկայություն ՀՀ-ում :	հատ	407000	814000	2	Ալ. Մանուկյան 1	2	մայիս-հուլիս 2020

ԳՆՈՐԴ
«ԵՊՀ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
'Արդշինբանկ' ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
պրոռեկտոր՝ Ա. Մալխասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Լանար Սերվիս ՍՊԸ» ՍՊԸ
ք Երևան, Բաբաջանյան 163/13
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 01843373
ՀՎՀՀ 2500010195390100
Տնօրեն՝ Տ. Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«13» մայիսի 2020 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/92» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30211280/1	Համակարգիչ 1	1250000	2500000	3750000	3750000	3750000	3750000	3750000	3750000	3750000
2	30211280/2	Համակարգիչ 2	1827000	3654000	5481000	5481000	5481000	5481000	5481000	5481000	5481000
3	30211280/3	Համակարգիչ 3	4406400	8812800	13219200	13219200	13219200	13219200	13219200	13219200	13219200
4	30211280/4	Համակարգիչ 4	2383200	4766400	7149600	7149600	7149600	7149600	7149600	7149600	7149600
5	30211280/5	Համակարգիչ 5	694800	1389600	2084400	2084400	2084400	2084400	2084400	2084400	2084400
6	30211280/6	Համակարգիչ 6	749050	1498100	2247150	2247150	2247150	2247150	2247150	2247150	2247150
7	30211200/1	Դյուրակիր համակարգիչ 1	461680	923360	1385040	1385040	1385040	1385040	1385040	1385040	1385040
8	30211200/2	Դյուրակիր համակարգիչ 2	508500	1017000	1525500	1525500	1525500	1525500	1525500	1525500	1525500
9	30211200/3	Դյուրակիր համակարգիչ 3	369150	738300	1107450	1107450	1107450	1107450	1107450	1107450	1107450
10	30211200/4	Դյուրակիր համակարգիչ 4	418000	836000	1254000	1254000	1254000	1254000	1254000	1254000	1254000
11	30211200/	Դյուրակիր համակարգիչ 5	467500	935000	1402500	1402500	1402500	1402500	1402500	1402500	1402500
12	30211200/6	Դյուրակիր համակարգիչ 6*	271333.34	542666.66	814000	814000	814000	814000	814000	814000	814000

ԳՆՈՐԴ
«ԵՊՀ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
'Արդշինբանկ' ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
պրոռեկտոր՝ Ա. Մալխասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Լանար Սերվիս ՍՊԸ» ՍՊԸ
ք Երևան, Բաբաջանյան 163/13
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 01843373
ՀՎՀՀ 2500010195390100
Տնօրեն՝ Տ. Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ